

Հաստատված է
ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով
մրցույթի հանձնաժողովի
2010թ. օգոստոսի 11-ի թիվ 3 որոշմամբ

«Հայաստանի ազգային արխիվ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հ Ր Ա Վ Ե Ր

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ –ի կողմից 1-ին արխիվապահոցի (ք. Երևան
Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի
ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

*Հարգելի մասնակից
Նախքան մրցույթի հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն
հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող մրցույթի հայտերը ենթակա են մերժման:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՅՈՒՆ

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 1-ին արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի

ՍԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Մրցույթի հրավերի պարզաբանումը և մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Մրցույթի հայտը ներկայացնելու կարգը
5. Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Մրցույթի հայտի ապահովումը
7. Մրցույթի հայտերի բացումը
8. Մրցույթի հայտերի գնահատումը, համեմատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Կանխավճարի ապահովումը
11. Մրցույթը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՍԱՍ II. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

Ընդհանուր դրույթներ
Մրցույթի հայտը
Մասնակցի որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը
Մրցույթի հայտի գնային առաջարկը
Մրցույթի հայտը պատրաստելու կարգը
Հավելվածներ 1-7
Ցանկ մրցույթի մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 1-ին արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի ներդրման աշխատանքների ձեռքբերման նպատակով, ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով մեկ փուլով անցկացվող բաց մրցույթի (այսուհետև՝ մրցույթ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 05.06.2008թ. N 853-Ն որոշմամբ հաստատված «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու մրցույթի պայմանների՝ գնման առարկայի, մրցույթի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու մրցույթի հայտը պատրաստելիս:

Մրցույթի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների:

Սույն մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՄԱՍ I

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 1-ին արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի ներդրման աշխատանքներ:

Գնման առարկայի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. Մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մրցույթին մասնակցելու համար մրցույթի գործընթացի ցանկացած փուլում Մասնակիցը պետք է բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2 Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն Մասնակիցը.

ա) պետք է ունենա գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) չպետք է դատական կարգով լինի անվճարուսակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

գ) չպետք է մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ունենա ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

դ) կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝

1) դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Սույն կետի ա) ենթակետում նշված որակավորման չափանիշները կգնահատվեն ստորև բերված կարգով.

N	Գնահատվող չափանիշի անվանումը	Գնահատվող չափանիշի պահանջվող չափը		Գնահատականը***
1	2	3		4
1.	Նախորդ երեք տարիների ընթացքում կատարած մնանատիպ աշխատանքների ընդհանուր ծավալը՝ A	A < 7 մլն A ≥ 7 մլն		Չի համապատասխանում Համապատասխանում է
2	Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ մեխանիզմների պահանջվող B և առաջարկվող C հարաբերությունը*	B / C > 1 B / C ≤ 1		Չի համապատասխանում Համապատասխանում է
3.	Ֆինանսական միջոցների առկայությունը՝ F	F < 2 մլն F ≥ 2 մլն		Չի համապատասխանում Համապատասխանում է
4.	Ինժեներատեխնիկական անձնակազմի միջին մասնագիտական ստաժը՝ L**	L < 3 տարի L ≥ 3 տարի		Չի համապատասխանում Համապատասխանում է

* Յուրաքանչյուր տեխնիկական միջոցի առաջարկվող քանակը պետք է առնվազն հավասար լինի սույն հրավերով պահանջվող քանակին (ներկայացված է սույն հրավերի Մաս II-ում):

** $L = (\sum ai) / n$, որտեղ ai -ն i-րդ աշխատողի մասնագիտական ստաժն է, իսկ n-ը՝ աշխատողների թիվը: Եթե ai ≥ 10, ապա ընդունվում է՝ ai = 10:

*** Չափանիշներից որևէ մեկին չբավարարելու (տողերից որևէ մեկում Անբավարար գնահատական ստանալու) դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. Մրցույթի հրավերի պարզաբանումը և մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

3.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին, պարզաբանումը տրամադրելու օրը գրավոր ծանուցվում են հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները, առանց նշելու պարզաբանում պահանջած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ կարող են մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու ձևով փոփոխվել գնման առարկայի բնութագրերը: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում: Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին մամուլում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել մրցույթի հայտի նոր ապահովում:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.6 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն հրավերին համապատասխան կազմակերպված մրցույթի անցկացումից ցանկացած ժամանակ՝ մրցույթի հայտարարության հրապարակման պահից մինչև մրցույթի հանձնաժողովի կողմից հաղթող ընտրելու մասին որոշման կայացումը:

4. Մրցույթի հայտը ներկայացնելու կարգը

4.1 Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում մրցույթի հայտ: Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մրցույթի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար մրցույթի հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Մրցույթի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Մրցույթի հայտերը պատրաստելու» հրահանգում:

4.2 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մրցույթի հայտարարությունը **հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 10.00-ն**, ք. Երևան, Հր.Քոչարի 5 / 2 շենք հասցեով: Մրցույթի հայտերը, ներառյալ սույն հրավերի 7.7.1 կետով նախատեսված գրությունը, ստանում և մրցույթի հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վահագ Աբխաթյանին: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք:

4.3 Մասնակիցները մրցույթի հայտով ներկայացնում են՝

ա. մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին հայտարարությունը,

բ. գնային առաջարկ,

գ. մրցույթի հայտի ապահովում,

դ. առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ (ծավալաթերթ-նախահաշիվ և ընդհանուր աշխատանքների և աշխատանքների առանձին տեսակների իրականացման ժամանակացույցը),

ե. հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն.

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված մրցույթի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

5. Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից մրցույթի հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ մրցույթը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ «Մրցույթի հայտը պատրաստելու» հրահանգի 4.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև մրցույթի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Մրցույթի հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը, մրցույթի հայտով, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է մրցույթի հայտի ապահովում: Մրցույթի հայտի ապահովման չափը կազմում է մրցույթի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսը:

6.2 Մասնակիցն իրավունք ունի, մինչև մրցույթի հայտը ներկայացնելը, պահանջել հաստատելու մրցույթի հայտի ապահովման ընդունելի լինելու հանգամանքը, որին կպատասխանվի մեծ հարցում ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթի հայտի ապահովումը ներկայացվում է տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի **N 7 հավելվածով:**

6.3 Մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում (զանձվում է), եթե այն ներկայացնողը հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ Օրենքի 39 հոդվածի 3-րդ մասի համաձայն գրկվում է գնման պայմանագիր ստորագրելու իրավունքից:

6.4 Բացառությամբ սույն հրավերի 6-րդ կետում նշված դեպքերի, մրցույթի հայտի ապահովումը գնման պայմանագիրը կնքելուց, իսկ մրցույթը չկայացած հայտարարվելուց կամ մրցույթի հայտը մերժվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է այն ներկայացնողին:

6.5 Մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է լինի առնվազն մինչև.

ա) մրցույթի հայտերի բացման օրվան հաջորդող 75-րդ աշխատանքային օրը կամ

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գնման պայմանագրի կնքմանը կամ Մասնակցի կողմից հայտը հետ վերցնելուն, հայտի մերժմանը կամ մրցույթը չկայացած հայտարարելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը:

6.6 Սույն հրավերի 3-րդ բաժնին համապատասխան՝ մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում մրցույթի հայտեր ներկայացրած Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը, կամ ներկայացնել մրցույթի հայտի նոր ապահովում: Հակառակ դեպքում մրցույթի հայտը մերժվում է:

7. Մրցույթի հայտերի բացումը

7.1 Մրցույթի հայտերի բացումը կկատարվի մրցույթի հանձնաժողովի հատուկ նիստում՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվան *հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 10.00-ին*, ք. Երևան, Հր.Քոչարի 5 / 2 շենք հասցեում:

7.2 Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների վերաբերյալ:

7.2.1 Կարգի 23-րդ կետի համաձայն՝ մրցույթի հայտերի բացման նիստում՝

1) մրցույթի հանձնաժողովը գնահատում է՝

ա. մրցույթի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող ծրարները,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված *պահանջներին*,

գ. առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին.

2) հանձնաժողովի նախագահը հայտարարում է մրցույթի յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

3) ներկայացված գնային առաջարկների հիման վրա որոշվում են 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակցները: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.4 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

4) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված գնահատման արդյունքում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Եթե առկա է անհամապատասխանություն մասնակցի կողմից ներկայացված մրցույթի հայտի բնօրինակի և պատճենների միջև, ապա հանձնաժողովի կողմից գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ հայտի բնօրինակը.

5) սույն կետի համաձայն հանձնաժողովի կողմից մրցույթի հայտերը գնահատվելուց հետո քարտուղարը մրցույթի հայտերի բնօրինակներն առանձնացնում և գույքագրում է: Մերժված հայտերի պատճենները վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց՝ հատուկ նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

6) հանձնաժողովի նախագահը հրապարակում է օրենքով նախատեսված տեղեկությունները և հանձնաժողովի հաջորդ նիստի օրը, ժամը և նիստը հայտարարում փակված:

7.3. Սույն հրավերի 7.2.1 կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալներին տրվում են հրավերով նախատեսված պահանջներին «Համապատասխանում է» կամ «Չի համապատասխանում» գնահատականները: «Համապատասխանում է» գնահատականը տրվում է, եթե մրցույթի հայտով մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են մրցույթի հրավերով դրա համար սահմանված պահանջները: Ընդ որում, գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը գնահատվում է նաև գնային առաջարկի՝ թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունն ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման (թվաբանական) ճշտությունը գնահատելու միջոցով: Թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով արտահայտված տվյալները: Թվաբանական անճշտությունների դեպքում, հիմք ընդունելով չափման միավորի ցուցանիշները, կատարվում է վերահաշվարկ:

7.4. Մրցույթի հանձնաժողովը մրցույթի հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են մրցույթի հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

ա) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

բ) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու հասցեները.

գ) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

դ) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ե) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

- զ) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
- է) մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.
- ը) տեղեկատվություն՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
- թ) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.
- ժ) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
- ժա) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

7.5. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7.6. Հատուկ նիստին հաջորդող աշխատանքային օրը բաց մրցույթի դեպքում պատվիրատուն հայտերի բացման նիստին չմասնակցած մասնակիցներին է ուղարկում (տրամադրում) մրցույթի հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը: Ընդ որում, բաց մրցույթի դեպքում՝

ա. էլեկտրոնային փոստի հասցեի առկայության դեպքում արձանագրությունն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով.

7.7.1. Հատուկ նիստի արդյունքների հրապարակման օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հանձնաժողովի կողմից 1-ին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը գրությամբ գործակալություն է ներկայացնում իր կողմից ստորագրված, իսկ հնարավորության դեպքում նաև կնքված՝ մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

7.7.2. Սույն հրավերի 7.7.1 կետով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացրած կամ մրցույթի հրավերով սահմանված որակավորման հատկանիշներ չունեցող մասնակցի հայտը մերժվում է, և տվյալ մասնակիցը հայտի մերժման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվին մուտքագրում է հայտի ապահովման չափով գումար: Սույն ենթակետով սահմանված ժամկետում հայտի ապահովման գումարը չվճարվելու դեպքում տվյալ մասնակցի մասին տվյալները ներառվում են գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

7.7.3 գնման պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Ընդ որում՝

ա. գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը,

բ. եթե գնման պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը մրցույթի հայտով ներկայացնում է նաև պայմանագրի կողմ հանդիսացող անձի պետական գրանցման վկայականի (անձնագրի) պատճենները, իսկ 1-ին տեղն զբաղեցրած ճանաչվելու դեպքում՝ նաև 7.7.1 կետով նախատեսված փաստաթղթերը,

գ. եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քանհինգ տոկոսը, ապա պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

8. Մրցույթի հայտերի գնահատումը, համեմատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը

8.1. Սույն հրավերի 7.7.1 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

1) քարտուղարը նախագահին է փոխանցում մասնակցի ներկայացրած փաստաթղթերը և գնահատման թերթիկների երկուական օրինակներ.

2) սույն կետով նախատեսված գնահատման արդյունքում՝

ա. անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում նիստը համարվում է կասեցված, գործակալությունը, նիստի բացման հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը ներկայացրած մասնակցին գրավոր ծանուցում է անհամապատասխանության մասին՝ վերջինիս հնարավորություն տալով ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով ուղղել անհամապատասխանությունը: Սույն մասով նախատեսված ժամկետում անհամապատասխանությունը չտուգելու դեպքում հանձնաժողովը մերժում է հայտը: Մերժված հայտի պատճենը վերադարձվում է մասնակցին՝ նիստին հաջորդող աշխատանքային օրը,

բ. անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում քարտուղարը փաստաթղթերի բնօրինակներն առանձնացնում և գույքագրում է, որից հետո փաստաթղթերի պատճենները, ներառյալ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկները, տրամադրում է հանձնաժողովի նախագահին:

8.2. Հանձնաժողովի անդամը, հայտի գնահատման իրականացնելիս, մասնակցի որակավորման հատկանիշներին տալիս է հրավերի պահանջներին «Համապատասխանում է» կամ «Չի համապատասխանում» գնահատականները: «Համապատասխանում է» գնահատականը տրվում է, եթե մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են մրցույթի հրավերով դրա համար սահմանված նվազագույն պահանջները:

8.3. Հանձնաժողովի անդամների կողմից սույն հրավերի 8.1 կետով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքները՝ գնահատման թերթիկի մեկ օրինակները գործակալություն ներկայացնում է տվյալ գնանշման պատվիրատուն՝ գրավոր, ոչ ուշ, քան սույն հրավերի 8.1 կետով նախատեսված նիստին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ փաստաթղթերի պատճենները և գնահատման թերթիկի մյուս օրինակը պատվիրատուն սահմանված կարգով արխիվացնում է:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, եթե գնահատման արդյունքներով մասնակցի հայտը՝

ա. գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, գործակալությունն օրենքով սահմանված կարգով մասնակցին ներկայացնում է պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ,

բ. գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, ապա սույն կարգով սահմանված կարգով գործակալությունը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղն զբաղեցրած մասնակցին՝

դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով պատվիրատուին: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում և գնահատվում են սույն կարգին համապատասխան:

8.4. Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել՝

1) մասնակցից բացատրություններ պահանջելու մասին: Բացատրությունները չեն կարող հանգեցնել մրցույթի հայտի փոփոխությանը.

2) մասնակցից պահանջել վերահաստատել իր որակավորման հատկանիշները: Մասնակցի որակավորման հատկանիշները համարվում են վերահաստատված, եթե նա հանձնաժողովին ներկայացնում է դրա մասին գրավոր հայտարարություն: Վերահաստատման շրջանակներում չեն կարող փոխվել մրցույթի հայտով ներկայացված փաստաթղթերը և (կամ) պահանջվել և (կամ) ներկայացվել մրցույթի հրավերով չնախատեսված փաստաթղթեր: Եթե ընտրված մասնակիցը չի վերահաստատում որակավորման իր հատկանիշները, ապա նրա մրցույթի հայտը մերժվում է, իսկ մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում:

8.5. Սույն հրավերի 8.4 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.6. Այն դեպքում, երբ մրցույթի արդյունքում պայմանագիր չի կնքվում՝ պայմանավորված այնպիսի հանգամանքներով, որոնց համար կողմերը պատասխանատվություն չեն կրում, ապա նշված կողմերի միջև իրավահարաբերությունը դադարում է:

8.7 Եթե մրցույթի մասնակցի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում մրցույթի հրավերով նախատեսված պայմաններին (կարգին), ապա մրցույթի այդ Մասնակցի հայտը մերժվում է:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Եթե մրցույթի հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Մասնակցի հայտը մերժվում է, եթե՝

1. Մասնակիցը չի համապատասխանում մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին.

2. Մասնակիցը չի համաձայնում վերը նշված՝ տառերով գրված գումարը հիմք ընդունելու պահանջին.

3. Օրենքով և սույն հրավերով նախատեսված այլ դեպքերում:

8.8 Մրցույթի հաղթողին որոշելու նպատակով, սույն հրավերով սահմանված կարգով համեմատվում են բավարար գնահատված հայտերը: Բավարար գնահատված հայտերից մրցույթում հաղթող է ճանաչվում առավել բարձր գնահատական ստացած առաջարկը: Ընդ որում, որքան ցածր է առաջարկված գինը, այնքան բարձր է Մասնակցի գնահատականը:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների

8.9 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակցից կարող է պահանջվել վերահաստատել որակավորման իր հատկանիշները: Ընտրված մասնակցի որակավորման հատկանիշները համարվում են վերահաստատված, եթե վերջինս, հրավերով սահմանված կարգով, դրա մասին ներկայացնում է հայտարարություն: Եթե ընտրված մասնակիցը չի վերահաստատում իր որակավորման հատկանիշները, ապա նրա մրցույթի հայտը մերժվում է և մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում: Նման դեպքում կազմվում է արձանագրություն՝ նշելով մրցույթի հայտի մերժման հիմքը:

8.10 Օրենքի 37-րդ հոդվածի հանձնաժողովը մրցույթի արդյունքների ամփոփման նիստում հայտարարում է ընտրված, և մրցույթում 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած Մասնակիցները կամ մրցույթը հայտարարում է չկայացած: Մրցույթի հանձնաժողովը մերժում է մրցույթի մնացած հայտերը:

8.11 Ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին հայտարարելուց հետո կազմվում է մրցույթի արդյունքների ամփոփման նիստի արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են մրցույթի հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե մրցույթի հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը մրցույթի արդյունքների ամփոփման վերաբերյալ ցանկանում է արտահայտել մրցույթի արդյունքների ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր, որը կցվում է նախորդ պարբերությունում նշված արձանագրությանը:

9. Պայմանագրի կնքումը

9.1 Մրցույթի հանձնաժողովի որոշման հիման վրա Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում գնման պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում **կանխավճարի** ապահովումը, ապա նա զրկվում է գնման պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում Պատվիրատուն գնման պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում մրցույթում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղը զբաղեցրած Մասնակցին: Պայմանագիր կնքելու առաջարկ ստացած, սակայն պայմանագիրը ստորագրելուց հրաժարված Մասնակիցը զրկվում է մրցույթի հայտի ապահովումը հետ ստանալու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի քանակագրերի փոփոխմանը:

10. Կանխավճարի ապահովումը

10.1 Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիր կնքվում է, եթե ընտրված մասնակիցը, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պայմանագրի կատարման ապահովում:

10.2 Ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում:

10.3 Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում, որի չափը հավասար է գնման պայմանագրի գնի տասը տոկոսին, ընդ որում, հատկացվելիք կանխավճարի առավելագույն չափը սահմանվում է պայմանագրի նախագծով, իսկ հաղթող ճանաչված մասնակիցն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու կանխավճարից:

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը ներկայացնում է նաև կանխավճարի չափով ապահովում:

Պայմանագրի կատարման ապահովումը հավասար է՝

ա. տվյալ տարում կատարվելիք աշխատանքների գնի տասը տոկոսին, իսկ կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ տարում կատարվելիք աշխատանքների գնի տասը տոկոսի և կանխավճարի չափի հանրագումարին, որը ներկայացվում է երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևերով: Ընդ որում, գնման պայմանագրում նախատեսվում է, որ հաջորդող տարիներին աշխատանքների կատարումը իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով, և՝

բ. հաջորդող տարիներին աշխատանքների գնի տասը տոկոսին, որը ներկայացվում է տուժանքի ձևով: Եթե հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի շարունակման համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված ապահովումը փոխարինվում է սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված ապահովման չափով և ձևերով: Ընդ որում, ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Այն դեպքում, երբ աշխատանքների կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվում ֆինանսական միջոցներ, ապա գնման պայմանագիրը լուծվում է:

10.4 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

10.5 Ապահովման ձևերն են երաշխիքը և կանխիկ գումարը: Կանխիկ գումարի ձևով կանխավճարի ապահովում ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է սույն հրավերի 10.3 կետում նշված չափով ապահովումը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի հաշվին: Կանխիկ գումարի ձևով կանխավճարի ապահովում ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել վճարումը հավաստող փաստաթուղթը (վճարման հանձնարարականը):

10.6 Կանխիկ գումարի ձևով ներկայացված կանխավճարի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվանք բացված գանձապետական հաշվում:

10.7 Օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրով նախատեսված ժամկետում:

11. Մրցույթը չկայացած հայտարարելը

11.1 Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

գ) ոչ մի հայտ չի ներկայացվել:

դ) ընտրված մասնակցի առաջարկած գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը:

ե) մրցույթի արդյունքում գնման պայմանագիր չի կնքվում:

11.2. Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո տեղեկագրում հրապարակվում է հայտարարություն՝ նշելով մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

12.1 Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ Պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:

12.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

ա) բողոքարկել Պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունները կառավարումն իրականացնող մարմին (ՀՀ տարածքային կառավարման նախարարություն) Օրենքի 53-րդ հոդվածի համաձայն:

բ) դատական կարգով բողոքարկել լիազոր մարմնի, պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունները՝ Օրենքի 56-րդ հոդվածի համաձայն:

ՄԱՍ II
Հ Բ Ա Հ Ա Ն Գ
Մ Բ Ց ՈՒ Յ Թ Ի Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Բ Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին մրցույթի հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Մրցույթի հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

2. Մրցույթի հայտը

2.1 Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել մրցույթի հայտ:

Մրցույթի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է որը ներկայացվում է մրցույթին մասնակցելու առաջարկով՝ (Հավելված 1):

2.2 Մասնակիցները մրցույթի հայտով ներկայացնում են՝

2.2.1 Մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին հայտարարություն, իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ՝

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

գ) մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

դ) Մասնակիցը կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

2.2.2 գնային առաջարկ, (Հավելված 4)

2.2.3. մրցույթի հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված 7)

2.2.4 առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ (Հավելված3, Հավելված4.1)

2.2.5 հնարավորության (առկայության) դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն.

3. Որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

3.1 Գնումներին մասնակցելու՝ մրցույթի հրավերի I մասի 2-րդ կետով նախատեսված՝ որակավորման իր չափանիշները հավաստելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 7.7.1 կետով նախատեսված գրությունը (Հավելված 5), որին կցվում է

ա) պետական գրանցման վկայականի (ներառյալ՝ բոլոր ներդիրների) պատճենի նուտարական կարգով վավերացված օրինակը (եթե Մասնակիցը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է),

բ) տեղեկանք Մասնակցի կողմից նախորդ ժամանակահատվածում ամբողջությամբ պատշաճ իրականացված նմանատիպ աշխատանքների մասին (հավելված 2.1): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել՝

- նմանատիպ աշխատանքների պայմանագրի պատճեն՝ ներառյալ բոլոր անբաժանելի մասը կազմող հավելվածների և՛ փոփոխությունների առկայության դեպքում, համապատասխան փոփոխությունների վերաբերյալ կնքված համաձայնագրերի (պայմանագրերի) կամ պայմանագրով նախատեսված այլ փաստաթղթերի պատճենները (նախագծերը կարող են չկցվել),

- պայմանագրի ամբողջ ծավալով պատշաճ կատարված աշխատանքների կատարողական ակտերի կամ հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները կամ պայմանագրի մյուս կողմի գրավոր հավաստումը (նշելով

աշխատանքների ծավալը) աշխատանքների պատշաճ կատարման մասին (բնօրինակը)՝ կնքված (եթե հավաստողը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է) և ստորագրված հավաստողի կողմից,

գ) 2009 թ. ֆինանսական հաշվետվությունների պատճենները (ներառյալ շահութահարկի հաշվարկը)՝ հարկային տարածքային մարմին ներկայացրած ֆինանսական հաշվետվություններին համապատասխանության մասին տվյալ Մասնակցին հաշվառող հարկային տարածքային մարմնի կողմից կատարված գրառումով, ստորագրված և կնքված հարկային պետական ծառայության կլոր կնիքով (բացառությամբ ընթացիկ տարում ստեղծված, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնց համար ֆինանսական հաշվետվությունների նշված ձևերի ներկայացումը ՀՀ օրենսդրությամբ պարտադիր չէ):

դ) տեղեկանք առկա ֆինանսական միջոցների մասին (հավելված 2.4), որին անհրաժեշտ է կցել բանկի կողմից կնքված և ստորագրված տեղեկանք կամ քաղվածք Մասնակցի բանկային հաշվից՝ Մասնակցի բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին կամ բացված վարկային գծի մասին բանկի հետ կնքված պայմանագրի պատճենը և բանկի կողմից կնքված և ստորագրված տեղեկանք՝ տվյալ պահին վարկային գծի առկա չափի մասին: Սույն ենթակետում նշված՝ բանկային հաշվի քաղվածքը (տեղեկանքը) և տվյալ պահին վարկային գծի առկա չափի մասին տեղեկանքը պետք է տրված լինեն առնվազն սույն մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու նախորդ աշխատանքային օրվա դրությամբ առկա ֆինանսական միջոցների մասին:

ե) տեղեկանք՝ ձեռքբերվող աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին (հավելված 2.2), ընդ որում տեղեկանքի «Ինչ վիճակում է գտնվում (զերացանց, լավ, բավարար)» սյունյակը ենթակա է պարոդադիր լրացման և «անբավարար» լրացնելու կամ չլրացնելու դեպքում մասնակցի հայտը տվյալ չափանիշով հանձնաժողովի կողմից գնահատվում է անբավարար:

Ձեռքբերվող աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական միջոցների և սարքավորումների ցանկը ներկայացված է ստորև.

Անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	2	3
Բեռնատար	Ցանկացած	2 հատ
Ավտոկռունկ	Ցանկացած	1 հատ

Տեղեկանքին անհրաժեշտ է կցել տեխնիկական միջոցների և սարքավորումների նկատմամբ սեփականությունը հավաստող փաստաթղթերի, իսկ վարձակալության կամ տվյալ գույքի նկատմամբ այլ իրավագործության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝ վարձակալությամբ կամ այլ իրավագործությամբ գույքը տրամադրողի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները: Ընդ որում, եթե տեխնիկական միջոցը կամ սարքավորումը (դրանց նկատմամբ իրավունքը) ենթակա է պետական գրանցման, ապա պետք է ներկայացվի պետական գրանցման փաստաթղթի պատճենը, իսկ եթե տեխնիկական միջոցը կամ սարքավորումը (դրանց նկատմամբ իրավունքը) ենթակա չէ պետական գրանցման, ապա պետք է ներկայացվի Մասնակցի հիմնական միջոցների հաշվառման գրքից քաղվածք՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից, որին անհրաժեշտ է կցել հիմնական միջոցների հաշվառման գույքային քարտի պատճեն՝ կազմված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից աշխատանքների կատարման համար ներկայացվող հարկման ենթակա յուրաքանչյուր սեփական կամ վարձակալված գույքի համար անհրաժեշտ է ներկայացնել Մասնակցի կամ վարձատուի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմնի կողմից տրված (կնքված և ստորագրված) տեղեկանք կամ քաղվածք՝ տվյալ գույքի համար 2009 թ. դրությամբ գույքահարկի վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու մասին:

գ) տեղեկանք պայմանագիրը կատարելու համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների մասին, ընդ որում՝ պարտադիր պայման է հանդիսանում տեղեկանքում ներառել այն մասնագետին(ներին) (տեղեկանքի «Նշումներ» սյունյակում տվյալ մասնագետի(ների) տողում նշելով «Լիցենզիա» բառը), որի (որոնց) առկայության պայմանով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մասնակցին տրամադրվել է սույն հրահանգի 3.1 կետի է) ենթակետով պահանջված լիցենզիան(երը) (հավելված 2.3): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել ներկայացված մասնագետների աշխատանքային գրքույկների և նրանց հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից: Անհրաժեշտ աշխատանքային ռեսուրս են համարվում առնվազն հինգ մասնագետները:

ե) տվյալ տեսակի գործունեության իրականացման լիցենզիայի(ների) պատճենի(երի) նոտարական կարգով վավերացված օրինակը(ները):

Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).

Քաղաքաշինական շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի(ների)՝ Բնակելի, հասարակական և արտադրական, Էներգետիկ

Մասնակցի կողմից ներկայացվող լիցենզիան(ները) չպետք է կասեցված լինի(են), ինչպես նաև դրա(նց) գործողության ժամկետը(ները) չի(են) կարող պակաս լինել սույն հրավերով նախատեսված՝ ձեռքբերվող աշխատանքների Մասնակցի կողմից հայտով ներկայացված կատարման վերջնաժամկետից,

ը) ընդհանուր աշխատանքների և աշխատանքների առանձին տեսակների իրականացման ժամանակացույցը՝ նշելով ընդհանուր աշխատանքների և աշխատանքների առանձին տեսակների ծավալները և կատարման ժամկետները (հավելված N3),

թ) տեղեկանք ՀՀ դատական ղեկավարամետոցի՝ Մասնակցի անվճարունակ ճանաչված չլինելու մասին՝ որը տրամադրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից հետո,

ժ) Մասնակցին հաշվառող՝ հարկային, սոցիալական ապահովագրության, համապատասխան տարածքային մարմինների կողմից հաստատված (կլոր կնիքով կնքված) տեղեկանք Մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու մասին, որը տրամադրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից հետո,

ժա) Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ, որը չի դիտարկվում որպես հրավերի պարտադիր պայման:

3.2 Մրցույթի հայտում ներառվող՝ մասնագետների աշխատանքային գրքույկների և դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, վարորդական իրավունքի վկայագրերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով:

3.3 Եթե գնման պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը մրցույթի հայտով ներկայացնում է նաև պայմանագրի կողմ հանդիսացող անձի պետական գրանցման վկայականի (անձնագրի) պատճենները, իսկ 1-ին տեղն զբաղեցրած ճանաչվելու դեպքում՝ նաև սույն հրավերի 1-ին մասի 7.7.1 կետով նախատեսված փաստաթղթերը,

Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ:

3.4 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.5 Սույն հրահանգի 3.1 կետի գ) և ժ) ենթակետերում նշված փաստաթղթերը ֆիզիկական անձինք չեն ներկայացնում:

3.6 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3.7 Եթե մասնակիցը միևնույն օրը տարբեր մրցույթներին մասնակցելու համար ներկայացնում է հայտեր, որից միայն մեկ հայտում է ներառում մրցույթի հրավերներով պահանջվող նույն փաստաթղթի բնօրինակը (ընդ որում տվյալ հայտը ժամանակագրական առումով բացվում է առաջինը), իսկ մյուս հայտերում՝ պատճենը՝ նշելով իր կողմից ներկայացված այն հայտը, որում ներառված է բնօրինակը, և դա առկա է նշված հայտում, ապա այդ հայտը մրցույթի հանձնաժողովի կողմից կարող է գնահատվել որպես մրցույթի հրավերի պահանջներին բավարարող:

3.8 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք կնքվում (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրվում են մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են կնքված (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի դեպքերում) և ստորագրված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակով, բացառությամբ սույն հրահանգի 3.6 կետում նշված դեպքերի:

4. Մրցույթի հայտի գնային առաջարկը

4.1 Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի մրցույթի հայտով:

Գնային առաջարկով նախատեսված շահույթի չափը չի կարող ավելի լինել ինքնարժեքի 20 տոկոսից:

4.2 Մրցույթի հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

4.3 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի հավելված 4-ով նախատեսված տեսքով, որին կցվում է առաջարկվող գնի ինքնարժեքի հաշվարկը՝ Մասնակցի կողմից կազմված ծավալաթերթ-նախահաշիվը, որի լրացման օրինակելի ձևը կցվում է (հավելված N 4.1), ընդ որում՝ ծավալաթերթ-նախահաշիվի բոլոր էջերը պետք է ստորագրված և կնքված լինեն մասնակցի կողմից: Յանկալի է հայտում ներառել ծավալաթերթ-նախահաշիվի էլեկտրոնային տարբերակը՝ կազմված համակարգչային էլսել (EXCEL) ծրագրով էլեկտրոնային կրիչով:

4.4 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

5. Մրցույթի հայտերը պատրաստելու կարգը

5.1 Մասնակիցը մրցույթի հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև 7.7.1 կետով նախատեսված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճենն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն Մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով նշվում են՝
ա) պատվիրատուի անվանումը և մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մրցույթի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հավելված 1
«ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1» ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

Մրցույթի նասնակցելու առաջարկ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով հայտարարված մրցույթի

..... չափաբաժնին (չափաբաժինների) և հրավերի պահանջներին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2010թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
**մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին
համապատասխանության մասին**

_____ հայտարարում է, որ.

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

գ) մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով.

դ) _____-ն կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

2) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

3) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2010թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2.1
«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
**Մասնակցի կողմից նախորդ ժամանակահատվածում կատարված նմանատիպ
աշխատանքների մասին**

Սույնով _____-ն հավաստում է, որ 2007թ. հունվարի 1-ից
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը կատարվել են _____,
(աշխատանքների անվանումը)

որի ընդհանուր արժեքը կազմել _____ ՀՀ դրամ:
թվերով/ տառերով

Կից ներկայացնում ենք _____

*(նշված նմանատիպ աշխատանքների պայմանագրի պատճենն՝ ներառյալ բոլոր անբաժանելի մասը կազմող հավելվածների
և, փոփոխությունների առկայության դեպքում, համապատասխան փոփոխությունների վերաբերյալ կնքված համաձայնագրերի
(պայմանագրերի) կամ պայմանագրով նախատեսված այլ փաստաթղթերի պատճենները (նախագծերը կարող են չկցվել),
պայմանագրի ամբողջ ծավալով պատշաճ կատարված աշխատանքների կատարողական ակտերի կամ հանձնան-ընդունման
արձանագրությունների պատճենները կամ պայմանագրի մյուս կողմի գրավոր հավաստումը (նշելով աշխատանքների ծավալը)
աշխատանքների պատշաճ կատարման մասին (բնօրինակը)՝ կնքված (եթե հավաստողը իրավաբանական անձ կամ անհատ
ձեռնարկատեր է) և ստորագրված հավաստողի կողմից):*

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.
(ամսաթիվը, ամիսը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
Տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին

N ը/կ	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման տեսակը)	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման) մակնիշը, պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Ինչ վիճակում է գտնվում (գերազանց, լավ, բավարար)	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

Կից ներկայացնում ենք _____

*(տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի (իսկ վարձակալության կամ գույքի նկատմամբ այլ իրավագործության դեպքում՝ համապատասխան փաստաթղթերի) պատճենները) **

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.

(ամսաթիվը, ամիսը)

* Վարձակալության կամ այլ իրավագործության դեպքում անհրաժեշտ է կցել նաև գույքը տրամադրողի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները, եթե տեխնիկական միջոցը կամ սարքավորումը (դրանց նկատմամբ իրավունքը) ենթակա է պետական գրանցման, ապա պետք է ներկայացվի պետական գրանցման փաստաթղթի պատճենը, կնքված և ստորագրված Մասնակցի կողմից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ
աշխատանքային ռեսուրսների մասին**

N	Անուն, Ազգանուն	Մասնագետների			Մասնակցի մոտ տվյալ պաշտոնին նշանակվելու ամսաթիվը, ամիսը և տարին	Նշումներ
		Զբաղեցրած պաշտոնը	Աշխատանքային փորձը (տարիներ)	Կրթությունը (մասնագիտական)		

Կից ներկայացնում եմք _____

(մասնագետների աշխատանքային գրքույկների և նրանց հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից,

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2.4
«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին

_____ -ի ֆինանսական միջոցները _____
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը) ամսաթիվը, ամիսը, տարին
դրությամբ կազմում են _____ ՀՀ դրամ:
թվերով/ տառերով

Կից ներկայացնում ենք _____

(բանկի կողմից կնքված և ստորագրված տեղեկանք կամ քաղվածք Մասնակցի բանկային հաշվից՝ Մասնակցի բանկային հաշվում առկա դրամական միջոցների մասին կամ բացված վարկային գծի մասին բանկի հետ կնքված պայմանագրի պատճենը և բանկի կողմից կնքված և ստորագրված տեղեկանք՝ տվյալ պահին վարկային գծի առկա չափի մասին)

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2010թ.
(ամսաթիվը, ամիսը)

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

աշխատանքների անվանումը

ընդհանուր աշխատանքների և աշխատանքների առանձին տեսակների իրականացման

N ը/կ	Աշխատանքների անվանումները	Ծավալը (ՀՀ դրամ)	Սկիզբը	Ավարտը
1				
2				
3				
4				
5				
--				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝				

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.
(ամսաթիվը, ամիսը)

Գ ն ի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով մրցույթի հրավերը,

այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով:

Չափաբաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	ԱԱՀ-ն* (ՀՀ դրամ)	Առաջարկված գինը (ՀՀ դրամ)
		տառերով և թվերով	տառերով և թվերով	տառերով և թվերով
1	2	3	4	5=3+4
1				

** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Կից ներկայացնում եմք առաջարկվող գնի ինքնարժեքի հաշվարկը՝ _____
մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

կողմից կազմված ծավալաթերթ-նախահաշիվը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ամսաթիվը, ամիսը) 2010թ.

Ծ ԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎԻ ԼՐԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀՀ դրամ

N ը/կ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	Օդատար ցինկապատ քիթեղից		C1	A1	B1
2	Պողպատե խողովակ		C2	A2	B2
3	Կցաշուրթ		C3	A3	B3
-	-	-	-	-	-
-	-	-	-	-	-
n	-	-	Cn	An	Bn
	Ընդամենը				ΣBi
	Շահույթ %				
	Ընդամենը				
	ԱԱՀ 20 %				
	Ընդհանուրը				

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.

(ամսաթիվը, ամիսը)

Մասնակցի կազմված նախահաշիվում յուրաքանչյուր աշխատանքի միավորի գնի մեջ պետք է ներառվեն բոլոր ծախսերը բացի շահույթից և ԱԱՀ -ից:

Ծանոթություն. — Խստագույն պահպանել՝

$$C1 \times A1 = B1$$

$$C2 \times A2 = B2$$

.....

.....

$$Cn \times An = Bn$$

$B_1 + B_2 + B_3 + \dots + B_n = \Sigma B_i$ և մյուս թվաբանական գործողությունների ճշտությունը

Հավելված 5
«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հրավերի

«ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին

Կից Ձեզ եմ ներկայացնում «ՀԱԱ-ԱՇՁԲ -10/1» ծածկագրով մրցույթի
հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին _____ ՍՊԸ-ի

Մրցույթի մասնակցի անվանումը (անունը)

համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ամսաթիվը, ամիսը) 2010թ.

ՑԱՆԿ

«ՀԱՍ -ԱՇՁԲ - 10/1» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի

N ը/կ	Փաստաթղթի անվանումը	Հրավերի համապա- տասխան հավելվածը	Նշումներ
1	Մրցույթին մասնակցելու առաջարկ	Հավելված 1	
2	Ենթակապալի առկայության դեպքում՝ պայմանագրի կողմ հանդիսացող անձի պետական գրանցման վկայականի (անձնագրի) պատճենները		
3	Մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ հայտարարություն	Հավելված 2	
4	Ընդհանուր աշխատանքների և աշխատանքների առանձին տեսակների իրականացման ժամանակացույց	Հավելված 3	
5	Գնի առաջարկ	Հավելված 4	
6	Ծավալաթերթ-մախսահաշիվ	Հավելված 4.1	
7	Տուժանքի մասին համաձայնություն	Հավելված 7	
8	Ներկայացվող փաստաթղթերի ցանկը		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝			

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՑԱՆԿ
«ՀԱՍ - ԱՇՁԲ - 10/1» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացվող որակավորումը հավաստող փաստաթղթերի

N ը/կ	Փաստաթղթի անվանումը	Հրավերի համապատասխան հավելվածը	Նշումներ
1	Գրություն՝ մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի	Հավելված 5	
2	Հարկային, սոցիալական ապահովագրության համապատասխան մարմնի կողմից տրամադրված տեղեկանք		
3	Տեղեկանք ՀՀ դատական դեպարտամենտից		
4	Տեղեկանք նախորդ ժամանակահատվածում կատարված մնանատիպ աշխատանքների մասին	Հավելված 2.1	
4.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
5	Տեղեկանք տեխնիկական միջոցների (սարքերի, սարքավորումների) մասին	Հավելված 2.2	
5.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
6	Տեղեկանք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների մասին	Հավելված 2.3	
6.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
7	Տեղեկանք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին	Հավելված 2.4	
7.1	Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր		
8	Պետական գրանցման վկայականի (ներառյալ բոլոր ներդիրների) պատճեն		
9	N _____ Լիցենզիայի(ների) պատճեն		
10	2009թ. ֆինանսական հաշվետվությունների (ներառյալ շահութահարկի հաշվարկի)		
11	Ենթակապալի առկայության դեպքում՝ հրավերով պահանջված համապատասխան փաստաթղթերը		
12	Ներկայացվող փաստաթղթերի ցանկը		
Ը Ն Գ Ա Մ Ե Ն Ը՝			

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

2010թ.

(ամսաթիվը, ամիսը)

**«ՀԱՅԱՔՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱԱ ԱՇՁԲ - 10/1**

ք. Երևան

«_____» «_____» 2010թ.

«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Վիրաբյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և « _____ » ---- ի դեմս Ընկերության տնօրեն ---- -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել 1-ին արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի ներդրման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաբերք-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2010թ. դեկտեմբերի 30-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին:

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ---- տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաբերքին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) -----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնի՝ 20 տոկոսը ----- (-----) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2010թ. պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր շաբաթված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառու, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառու, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

***** Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ:**

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

8.5 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրով նախատեսված կանխավճարի ապահովումը վերադարձվում է Կապալառուին՝ պայմանագրի կատարման ավարտից 40 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ՝ կատարմանը համամասնորեն:

8.9 Սույն պայմանագրով նախատեսված՝ իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ք.Երևան, Հր.Քոչարի 5/2
ՎՏԲ Հայաստան բանկ
հհ. 160481009449
ՀՎՀՀ 00078217

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

Պատվիրատու

հասցե _____

հհ _____

հվհ _____

հասցե _____

հհ _____

հվհ _____

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն _____

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2010թ.

Պայմանագրի անվանումը՝ -----

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 2010թ.

Պայմանագրի համարը՝ _____.

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և կապալառու՝ ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 2010թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N _____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «_____» «_____» 2010թ–ից «_____» «_____» 2010թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	-----	-----		-----

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

_____ (ստորագրություն)

ազգանուն _____

Կ Տ _____

_____ (ստորագրություն)

ազգանուն _____

Կ Տ _____

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N ը/կ	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀԱԱ 2010թ բյուջեով նախատեսված միջոցներից բառ ամիսների՝ ընդ որում			
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 1-ին արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդորակման համակարգի ներդրում	30 %	60 %	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու
 ք.Երևան, Հր.Քոչարի 5/2
 ՎՏԲ Հայաստան բանկ
 հհ. 160481009449
 ՀՎՀՀ 00078217

 (ստորագրություն)
Վ.Տ

Կապալառու

 (ստորագրություն)
Վ.Տ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի արխիվապահոցի (ք. Երևան Բաղրամյան 59/4) ջեռուցման, հովացման, օդափոխության և օդաորակման համակարգի ներդրման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1				
2				
3				
4				
5				
...				
ԸՆԴԱՄԵՆԸ				

Պատվիրատու
 ք.Երևան, Հր.Քոչարի 5/2
 ՎՏԲ Հայաստան բանկ
 հհ. 160481009449
 ՀՎՀՀ 00078217

 (ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու

 (ստորագրություն)
Կ.Տ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀԱԱ -ԱՇՁԲ-10/2

ք. Երևան

« » _____ 2010թ.

«-----» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Արխիվ) կողմից կազմակերպված՝ «----- ձեռքբերման» ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով մրցույթին, պետք է ներկայացնի մրցույթի հայտի ապահովում և մրցույթին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարման ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Արխիվի կողմից կազմակերպված «----- ձեռքբերման» ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով մրցույթին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և մրցույթի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Գործակալությանը վճարում է տուժանք՝ ----- (-----տասերով-----) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Արխիվն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 քանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Արխիվին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «-----» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «-----» ՍՊԸ-ն հանձնարարում է «-----» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է Արխիվի կողմից ՀԱԱ-ԱՇՁԲ-10/1 ծածկագրով կազմակերպված մրցույթի հրավերի վավերականության ընթացքում՝ մինչև 20—թ. —ի 31-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Արխիվի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«-----» ՍՊԸ,

ք. Երևան, -----

«-----» բանկ»

h/h -----

տնօրեն -----

(ստորագրություն)

զ/ի. հաշվապահ -----

(ստորագրություն)

Կ.Տ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հայաստանի ազգային արխիվի
 տնօրեն Ա.Վիրաբյան
 «-----»----- 2010թ.

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ

Հայաստանի ազգային արխիվի
 (Բաղրամյանի 59/4 արխիվապահոցի օդափոխություն)

NN	Անվանում	Չափ	Չափի միավոր	Քանակը	Գինը	Համագոր
1	2	3	4	5	6	7
Ն յ ո թ						
1.	Օդատար ցինկապատ թիթեղից	=0.9մմ	մ ²	83		
2.	Օդատարի մեկուսացում հանքային բամբակով		մ ²	71		
3.	Անշարժ ճաղաշարժ	MVM125s	հատ	100		
4.	Այլումինե 2 շերտանի շարժական ճաղաշարժ	800x450	հատ	48		
5.	Օդառիչ ճաղաշար (3 հատից 150X490)	490x450	լր-զմ	1		
6.	Ճկում ներդիր		հատ	4		
7.	Պողպատե խողովակ	Ø76	մ	20		
8.	Զերմամեկուսիչ խողովակ	2 1/2"	մ	20		
9.	Փական butterfli	Ø50	հատ	8		
10.	Հետադարձ բրոնզե փական	Ø50	հատ	2		
11.	Կցաշուրք		հատ	16		
12.	Մետաղական կոնստրուկցիա ամրացման համար		կգ	54		
13.	Մետաղական խողովակի ներկում համակոռոզիոն ներկով	երկտակ	մ ²	7		
14.	Մետաղական խողովակի ձևավոր մասեր		կգ	33		
15.	Կոնդիցիոների էլեկտրական միացումներ (եռաֆազ անջատիչ (100A) – 1 հատ, եռաֆազ թողարկիչ (63A) – 1 հատ)		լր-զմ	1		
Սարքավորում						
16.	Պոմպ չիլերի համար	Q=7մ ³ /ժ, H=20մ	հատ	2		
17.	Ներածման խուց L=27000մ ³ /ժ, P=400Պա	Qg=40Կվտ Qg=72Կվտ	հատ	1		
18.	Խոնավացման խուց	G=10կգ/ժ	հատ	1		
19.	Օդամուղ վերաշրջանառության	L=25750մ ³ /ժ, P=400Պա	հատ	1		
20.	Օդամուղ արտածման	L=250մ ³ /ժ, P=10Պա	հատ	5		
21.	Ընդարձակման մեմբրանային անոթ	V=60լ	հատ	1		
22.	Խառնիչ փական եռաբայլ	Ø40	հատ	1		
23.	Խառնիչ փականի շարժիչ		հատ	1		
24.	Պաշտպանիչ թերմոստատ	ամառ-ձմեռ ± 30	հատ	1		
25.	Թերմոստատ		հատ	1		
Սառնամատակարարում						
26.	Չիլեր օդային հովացմամբ	Q=50Կվտ	հատ	1		
27.	Համակարգի ներդրման (տեղադրման) աշխատանքի ծախսեր					

Ծանոթություն՝

1. Շինարարական աշխատանքները կատարում է Պատվիրատուն:

Պատասխանատու ճարտարագետ

Ա.Գասպարյան